ուտացելոց առ ժողովուրդն Երուսաղէմի եւ առ ամենայն ազգս, որք բնակեալ են 'ի քաղաքին եւ 'ի սահմանս նորա, որոց յանձնատուր լինելն խնայեցաք անձանց և ընչից նոցին. ազատ լիցին եկեղեցիք և խաչք, մի' խափանեսցին և մի' կործանեսցին, և մի' ինչ առցի 'ի նոցանէ և ոչ 'ի սեպհականութեանց նոցին. մի ոք դարձեսցի 'ի կրօնից նոցա, և մի զոք վնասեսցեն. Հրէայք մի բնակեսցին յԵրուսաղէմ ընդ քրիստոնեայս, և ժողովուրդքն ամենայն լիցին հարկատու ըստ օրինակի այլոց քաղաքաց. Ցոյն առաղակք ելցեն անտի, իսկ եթէ ոք կամիցի մեկնիլ 'ի քաղաքէն՝ ազատ լիցի ինքն և ստացուածք իւր. նոյնպէս և որք մնասցեն անդ, և եղիցի հարկատու իբրեւ զմի 'ի բնակչաց Երուսաղէմի։ Եւ եթէ ոք 'ի բնակչաց քաղաքին կամիցի մնալ ընդ Ցոյնս և պահել զեկեղեցիս, զխաչս և զինչս իւր՝ չիք արգել. եւ եթէ օտարական ոք մնասցէ 'ի քաղաքին՝ եղիցի հարկատու իբրեւ զմի 'ի նոցանէ. եւ եթէ կամի դառնալ 'ի հայրենիս իւր՝ մի' նեղեսցեն զնա մինչեւ ժողովեսցէ զհունձս իւր. եւ որ ինչ է 'ի դրի ասա ուխտ Աստուծոյ, և պարտիք նորին Մարգարէին և Խալիֆային Իսլամայ. ապա ձեռնադրեն 'ի դրի ասա չորեքին բարեկամք նորին իբր վկայք։

Յետ կատարելոյ Օմարայ զպայման հաշտութեան ընդ Երուսաղէմացիս, եհարց ցՊատրիկն զաղօթարանէ Դաւթի, եւ նա խոստացաւ ցուցանել զայն։ Ապա յարեաւ Օմար 'ի տեղւոջէ իւրմէ ած զսուրն ընդ մէջ իւր, ածին և 4000 զօրականքն եկեալ ընդ նմա եւ գտանէն Սուսերածիգ, որոց ոչ էր օրէն կրել զայլ զէնս բաց 'ի սրոյ, և կալեալ զձեռանէ Պատրիկին մտին յԵրուսաղէմ բաղմութեամբ, եւ դէպ ուղիղ գնացին 'ի տաճարն Ս. Յարութեան, եւ ասէ. այս է աղօթարանն Դաւթի, իսկ Օմար ոչ ընկալաւ զայն. և անտի գնացին յեկեղեցին Սիոնի, և ոչ ընդ այն հաճեցաւ, և ապա գնացին 'ի տեղի տաճարին Սողոմոնի. իբրեւ հասին 'ի դուռն՝ տեսին զի լցեալ էր աղբիւրն մինչ 'ի կամարս և հոսէր արտաքս յաստիճանացն եւ վակեալ էր զմուտս. ապա անկեալ յափսիթերս մտին 'ի ներքս և հասին 'ի գաւթին. ամբարձեալ Օմարայ զաչս հայեցաւ այսր և անդր, եւ ասէ. այս է